Ծրագրի նախապատմություն և համատեքստ

- Հայաստանի Շիրակի մարզի լեռնային լանդշաֆտը և խոցելի գյուղատնտեսությունը տուժում են կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած հողերի դեգրադացիայից և ջրհեղեղներից՝ սպառնալով տեղական տնտեսությանը և ավելի քան 30,000 բնակչի կենսապահովմանը:
- Վերջին 90 տարվա ընթացքում ջերմաստիճանի բարձրացումը, երաշտների և կարկուտի հաճախակիությունը խորացնում են Արթիկի, Վարդաքարի, Հառիճի և Նահապետավանի խոցելի տարածքների ռիսկերը:
- Քարհանքի թափոնները և ջրհեղեղները սահմանափակում են գյուղատնտեսության և անասնապահության զարգացումը՝ բացակայող հարմարվողական միջոցառումների պայմաններում:
- Արթիկի և հարակից համայնքների գյուղատնտեսությունից կախված բնակչության գործունեությունը հաճախ բացասական ազդեցություն է ունենում էկոհամակարգերի վրա՝ խաթարելով բնական լանդշաֆտների կայունությունը:

Մոտեցում և նպատակներ

Ծրագիրը նպատակ ունի նվազեցնել Արթիկ, Վարդաքար, Հառիճ և Նահապետավան համայնքների խոցելիությունը կլիմայական ռիսկերի նկատմամբ՝ համայնքահեն, գենդերային հաշվետու միջամտություններով, կլիմայակայուն գյուղատնտեսական արժեշղթաների խթանմամբ, կարողությունների զարգացմամբ և տեղեկատվության փոխանակմամբ, մշակելով հարմարվողականության ռազմավարություններ, ներդնելով էկո-ինժեներական տեխնոլոգիաներ, վերականգնելով դեգրադացված քարհանքի տարածքները և ապահովելով հողի չեզոք դեգրադացիա՝ համաձայն Հարմարվողականության հիմնադրամի քաղաքականությունների և միջազգային լավագույն փորձի:

Ծրագրի հիմնական նպատակները և արդյունքները

- Ծրագիրը նպատակ ունի նվազեցնել Արթիկ, Վարդաքար, Հառիճ և Նահապետավան համայնքների խոցելիությունը կլիմայական ռիսկերի նկատմամբ՝ վերականգնելով դեգրադացված լանդշաֆտները, կանխարգելելով ջրհեղեղները, ամրապնդելով գյուղատնտեսական կարողությունները և բարձրացնելով էկոհամակարգերի հարմարվողականությունը:
- **Արդյունք 1. Կլիմայի փոփոխության և մարդածին գործոնների հետևանքով տուժած բնական և ագրոլանդշաֆտները վերականգնված են, կառավարվող են և հարմարվողական ներուժը բարձրացել է:**
- **Արդյունք 2 Կլիմայի փոփոխության հետևանքով ջրհեղեղների առաջացրած սոցիալ-տնտեսական և բնապահպանական սպառնալիքները նվազել են:**
- **Արդյունք 3. Թիրախային համայնքներում բարձրանում է իրազեկվածությունը կլիմայի փոփոխության, ջրհեղեղների կանխարգելման և հողերի չեզոք դեգրադացիայի վերաբերյալ՝ ուժեղացնելով պլանավորումն ու մոնիթորինգը:**

Բաղադրիչներ

Ծրագիրը ներառում է երեք բաղադրիչ

Բաղադրիչ 1: Կլիմայի փոփոխության և մարդածին գործոնների ազդեցության տակ գտնվող տարածքի բնական լանդշաֆտների վերականգնում, կառավարում և հարմարվողական ներուժի բարձրացում

Այս բաղադրիչը նպատակ ունի վերականգնել փակված քարհանքի դեգրադացված տարածքները՝ անտառպուրակ և հանգստի գոտի ստեղծելով, կլիմայակայուն ծառեր ու թփեր տնկելով, ոռոգման համակարգ կառուցելով: Վարելահողերը, արոտավայրերը և խոտհարքները բարելավվել օրգանական ու հանքային պարարտանյութերով, ինչպես նաև խոտաբույսեր ցանելով: Կատարել հողային աշխատանքներ, սևահողի լիցք ու ցանկապատի կառուցում: Այս միջոցառումները կնպաստեն էկոհամակարգերի վերականգնմանը, ջրի կլանման բարելավմանը և կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության բարձրացմանը:

Բաղադրիչ 2: Ջրհեղեղների կանխարգելում և կառավարում

Այս բաղադրիչը նպատակ ունի նվազեցնել ջրհեղեղների ռիսկերը՝ մաքրելով և լայնացնելով գետերի հունները, ամրացնելով պատնեշները և կառուցելով պաշտպանական կառույցներ: Մաքրել ու լայնացնել Արթիկջուր գետի և նրա վտակի հունները, պատնեշները ամրացնել գաբիոնային շարվածքով: Դեգրադացված լանջերը պաշտպանել պոլիմերային գեոցանցերով, սևահողի լիցքով, խոտացանքով և ծառատնկմամբ: Այս միջոցառումները կնպաստեն ջրային ռեսուրսների կայուն կառավարմանը, ջրհեղեղների կանխարգելմանը և համայնքների անվտանգության բարձրացմանը:

Բաղադրիչ 3: Տեղեկացվածության և գիտելիքների բարձրացում

Կլիմայի փոփոխության ներկայիս պայմաններում բնակչության իրազեկվածության և գիտելիքների մակարդակի բարձրացում՝ փակված քարհանքերի և ջրհեղեղների կառավարման վերաբերյալ

Այս բաղադրիչը նպատակ ունի բարձրացնել բնակչության և համայնքների իրազեկվածությունը կլիմայի փոփոխության, բնական աղետների կանխարգելման և հարմարվողականության վերաբերյալ՝ դասընթացներով և կարողությունների զարգացմամբ: Էկոակումբներ ստեղծել Արթիկ, Հառիճ, Նահապետավան և Նոր Կյանք համայնքներում՝ համակարգչային տեխնիկա և գյուղատնտեսական գործիքներ

տրամադրելով: Ուսումնասիրել ցուցչային ապահովագրության մեխանիզմների ներդրման հնարավորությունները: Այս միջոցառումները կնպաստեն համայնքների գիտելիքների բարձրացմանը, բնապահպանական կայունության խթանմանը և կլիմայական ռիսկերի նկատմամբ հարմարվողականության ամրապնդմանը:

«Արթիկ քաղաքի փակված քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում» ծրագիրը նպատակ ունի բարձրացնել բնական և գյուղատնտեսական լանդշաֆտների հարմարվողականությունը կլիմայի փոփոխությանը, կանխարգելել ջրհեղեղները, վերականգնել դեգրադացված տարածքները՝ ստեղծելով անտառպուրակ և հանգստի գոտի, բարելավել հողերի որակը, բարձրացնել համայնքների իրազեկվածությունն ու կարողությունները՝ խթանելով սոցիալ-տնտեսական զարգացումը և էկոհամակարգերի կայունությունը:

Աիդա Սարգսյան, ԲԾԻԳ ՊՀ